

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝



ԵՊՀ Գիտական հարցերի
գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան

« _____ » 2025թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Լուսինե Գառնիկի Այդինյանի «Կեռնեխների (*Turdidae*, *Turdus*) էկոլոգիան
Ստեփանակերտ քաղաքում և հարակից տարածքներում» թեմայով ատենախոսության
վերաբերյալ, որը ներկայացված է Գ.00.08 – «Կենդանաբանություն,
մակաբուծաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը

Թեմայի արդիականությունը

Ուրբանիզացված տարածքներում կենսաբազմազանության ուսումնասի-
րությունները շատ կարևոր են: Քաղաքային կենսաբազմազանության
ուսումնասիրությունն էական նշանակություն ունի ոչ միայն սպրեյու, էկոլոգիապես
կայուն քաղաքներ ստեղծելու համար, այլ նաև օգնում է ապահովել, ներդաշնակ
հավասարակշռություն ուրբանիզացիայի և բնության միջև: Քաղաքներն անհրնդհատ
փոփոխվող կենսամիջավայրեր են, որոնցում իրականացվող հետազոտությունները
հնարավորություն կտան գիտնականներին պարզելու, թե ինչպես է ուրբանիզացիան
ազդում էկոհամակարգերի հավասարակշռության վրա, որ տեսակներն են
դիմացկուն, որոնք վտանգված, և ինչպես պահպանել նրանց: Քաղաքային
կենսաբազմազանությունն ուղղակիորեն նպաստում է այնպիսի կարևոր
ծառայությունների, ինչպիսիք են փոշոտումը, վնասատուների դեմ պայքարը և օդի և
ջրի մաքրումը: Արցախի թոչնաֆաունայի վերաբերյալ ամփոփ տվյալներ չկան,
ուստի արդիական են Ստեփանակերտի և հարակից տարածքների թոչնաֆաունայի
տեսակային կազմի, էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասի-
րությունները և չափազանց կարևոր:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել Ստեփանակերտ քաղաքի և հարակից տարածքների օրնիտոֆաունան, բաշխվածությունը, կենոնիսների ցեղի էկոլոգիան և կենսաբանությունը՝ որպես ուրբանիզացված տարածքերին հարմարվող մոդելային խումբ:

Աշխատանքի հիմնական խնդիրներն էին.

- պարզաբանել Ստեփանակերտ քաղաքի և հարակից տարածքների օրնիտոֆաունան,
- պարզաբանել Ստեփանակերտ քաղաքի և հարակից տարածքների կենոնիսների տեսակային կազմը, թվաքանակը, և փոփոխման պատճառները,
- ուսումնասիրել քաղաքում և քաղաքամերձ տարածքներում բնակվող տարբեր տեսակների կենոնիսների բների կառուցման գործընթացը,
- պարզել կենոնիսների ակտիվության տիպերը, կերայի կազմը, բազմացման ժամկետները և դրանց սեզոնային փոփոխությունները,
- պարզել կենոնիսների տեղաշարժման ուղիները,
- իրականացնել Ստեփանակերտ քաղաքում և հարակից տարածքներում կենոնիսների տարածվածության գույքագրում, կազմել քարտեզներ,
- գնահատել կենոնիսների տեսակների էկոլոգիական կարգավիճակը;

Դրված խնդիրների լուծման համար հեղինակը կատարել է մեծածավալ դաշտային աշխատանքներ՝ կիրառելով կենդանաբանական և էկոլոգիական հետազոտությունների համար ընդունված համապատասխան մեթոդներ:

Աշխատանքի նորույթը և գիտագործական նշանակությունը

Առաջին անգամ ուսումնասիրվել է Ստեփանակերտ քաղաքի և նրա հարակից տարածքներում թռչունների տեսակային կազմը: Հեղինակի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված տարածքում գրանցվել է 37 ընտանիքներին պատկանող 117 տեսակ: Բացի այդ ուսումնասիրված տարածքում գրանցվել է կենոնիսների 4 տեսակներ: Ներկայացվել է նրանց բաշխվածությունը ուսումնասիրվող տարածքում կենոնիսների կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները՝ բնադրավայրերը, կերային կազմը, սեզոնայնությունն ու քոչերը:

Այսպիսով, ատենախոսությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն: Կատարված ուսումնասիրության արդյունքները շատ կարևոր են և հիմք կհանդիսանան ուրբանգիացված տարածքներում թռչունների մշտադիրտարկման համար: Ստացված արդյունքները արժեքավոր տվյալներ են ուրբանգիացված տարածքներում կենդանիների մշտադիրտարկման համար: Դրանք կարող են ներառվել նաև ուսումնա-մեթոդական գործընթացներում՝ մասնագիտական ծրագրերում, դասընթացում:

Ատենախոսության կառուցվածքը, բովանդակությունը արտացոլված են ատենախոսության սեղմագրում, հիմնադրույթները հրատարակված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունված 8 գիտական աշխատանքներում: Դրանք զեկուցվել են տարբեր գիտաժողովներում և հանդիպումներում:

Այսպիսով, Լ.Այդինյանի ատենախոսությունը ամփոփ աշխատություն է, որում ամբողջացված և ներկայացված են Ստեփանակերտ քաղաքի և նրա հարակից տարածքների թռչնաֆանունայի վերաբերյալ տվյալներ:

Ընդհանուր առմամբ գնահատելով աշխատանքը և չունենալով սկզբունքային առարկություններ, հարկ ենք համարում նաև նշել ատենախոսությունում տեղ գտած թերությունները:

Դիտողություններ

1. Տվյալ տարածաշրջանի թռչնաֆանունայի վերաբերյալ տեղեկատվությունը չափազանց կարևոր է: Ավելի նպատակահարմար կլինեն ներկայացնել տվյալները ոչ միայն ընտանիքների մակարդակով, այլ նաև տեսակային կազմով, մասնավորապես վտանգված տեսակները:
2. Գլուխ 4-ում ներկայացված է թռչունների տեսակային և քանակական կազմն ըստ սեզոնների: Թռչունների տեսակային կազմը ներկայացված է տեքստում, սակայն ավելի հասկանալի և արժեքավոր կլինեին տվյալները, եթե պատկերված լինեին առանձին աղյուսակով՝ նշելով լանդշաֆտների տարբերությունները և սեզոնայնությունը:
3. Գլուխ 5-ում մանրակրկիտ ներկայացված է կեռնեխների յուրաքանչյուր տեսակի տարածվածությունը, բների քանակները, բնադրման խտությունները,

սակայն բացակայում է տարբեր տեսակների միջև համեմատությունը: Կեռնեխների բաշխվածության, վարքագծի և էկոլոգիական առանձնահատկությունների վրա ազդող պատճառների վերաբերյալ վերլուծություններ չեն իրականացվել: Համեմատական վերլուծության բացակայությունը սահմանափակում է ընդհանուր պատկերացումը թռչունների փոխհարաբերությունների և նրանց էկոլոգիական դերերի մասին, ինչը կարող էր բարձրացնել հետազոտության գիտական արժեքը:

4. Գլուխ 6-ում ներկայացված են ուսումնասիրված չորս տեսակի կեռնեխների կերի կազմը, դրա սեզոնային փոփոխությունները և բաշխվածության առանձնահատկությունները: Այս գլխում ևս բացակայում է տարբեր տեսակների միջև համեմատական վերլուծությունը, ինչը թույլ կտար ավելի մանրամասն հասկանալ նրանց սննդային նախընտրությունները, տարբերությունները և նմանությունները: Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել խորը վերլուծություն այն գործոնների վերաբերյալ, որոնք ազդում են կերի կազմի փոփոխությունների վրա տարբեր սեզոններին, ինչպիսիք են կլիմայական պայմանները, սննդային ռեսուրսների առկայությունը, մարդկային ազդեցությունը և այլ բնապահպանական գործոններ:
5. Ատենախոսությունում առկա են մի շարք ոճաբանական, լեզվաբանական և տեխնիկական բնույթի վրիպումներ և ոչ հայահունչ եզրույթներ:

Եզրակացություն

Լուսինե Գառնիկի Այդինյանի «Կեռնեխների (Turdidae, *Turdus*) էկոլոգիան Ստեփանակերտ քաղաքում և հարակից տրածքներում» թեմայով թեկնածուականատենախոսությունն աշխատանքի ծավալով, մեթոդական կատարմամբ, արդիականությամբ, գիտական նորությամբ, տեսական և գործնական նշանակությամբ համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուականատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ հեղինակը՝ Լուսինե Գառնիկի Այդինյանը,


արժանի է Գ.00.08 - «Կենդանաբանություն, մակաբուծաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Աշխատանքը քննարկվել է փետրվարի 14-ին տեղի ունեցած ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի թիվ 7-րդ նիստում, որին ներկա էին. ամբիոնի վարիչ, կ.գ.դ. Մ.Ս. Առաքելյանը, դոցենտներ՝ կ.գ.թ. Ա.Վ. Ասլանյանը, կ.գ.թ. Ա.Ս. Ղազարյանը, կ.գ.թ. Գ.Յ Պապուլը, ասիստենտներ, կ.գ.թ. Թ.Կ. Հարությունյանը, կ.գ.թ. Մ.Վ. Արզումանյանը, ինչպես նաև ասպիրանտներ և ավագ լաբորանտներ:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի
կենդանաբանության ամբիոնի վարիչ,
կ.գ.դ.

Մ. Առաքելյան

«Մ. Առաքելյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ»
ԵՊՀ գիտքարտուղար, Բ.Գ.Թ.



Մ. Հովհաննիսյան

18.02.25 Բ.